

հասպառնու, և զբիտար աշխարհիս ընդունաց Առաքուած, ով յամօթ առացէ զնզըս . . (Ա. Կարնթ. Ա. 27): Արդարութիւնն թագաւորութիւնը մերձենումէ: Կուգայ ժամանակ, իրը ինքնասիրութեան և գուռզութեան արուեստական բոլոր փայլն ու մեծութիւնը՝ հրապարակ կելնէ իւր զգուելի մերկութեամբ և երբ հեզ, խոնարհ և անյայտ կեանքը, որ Աստուծոյ փառացն էր նուիրուած՝ կրթուաւորուի աշխարհում յաւիտենական փառքով: Երանին նրանց, որոնք այդ օրը կարժանան լսելու՝ «Անիւ ծառայ՝ բարի և հաստարչիմ, մատու յուրախոննիւն գլւառն ու . . (Մատթ. ԽԵ. 21): Ո՞վ Տէր, տուր, որ մենք ամենքս էլ այդ խօսքերը լսելու արժանացողներիցը լինինք. ամէնքս էլ, այս օրուանից ոկուեալ, մեր արիութիւնը Քո գոհութեանդ մէջ, իսկ մեր վարձը՝ Քո սիրոյդ մէջ որոնենք. ամէն:

(ԲԵՐԵՒԵ)

Թարգմ. Ե. Ք. Գ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հրարատի անցեալ համարում յայտնեցինք այն ուրախութիւնն, որ զգաց թէ բարձրագոյն հոգեւոր իշխանութիւնը, թէ Ա. Ծիրույյս միաբանութիւնն և թէ նոյն իսկ ժողովուրդը, Շեմարանի պատուելի տեսուչ Արշակ Նահապետեանի (այժմ հայր Նահապետ) և երեք ուսումնաւարտների կրօնաւորական դասը մտնելու առթիւ. այդ ուրախութիւնը հասկանալի է և բնական, քանի որ վաղուց արդէն զգալի է եղած ուսումնական և գիտնական եկեղեցականաց կարօտութիւնն և օր աւուր վերայ աւելի զգալի է դառնում, ժողովրդեան կրօնական զգացմանց պակասելովն և

զանազան բարոյական ախտերի նորա մէջ ար-  
մատանալո՞ն, որ հետևանք է զանազան նո-  
րա մուտ վարդապետութեանց և գաղափարների  
տարածուելուն նորա մէջ և տնտեսական ու  
քաղաքական ինդիրների ազդեցութեան զօրա-  
նալուն։ Ե.յս ցաւը ընդհա՛ռ է ամեն քրիս-  
տոնեայ ազգերի մէջ ներկայումս։ Ուստի և ա-  
մեն քրիս ո՞ւեայ եկեղեցեաց մէջ սեսնում ենք  
մեծ ջանք ժողովրդեան այդ բարոյական անկման  
առիթ եղող մոլար վարդապետութեանց դէմ մա-  
քառելու, ու եկեղեցու զէնքով, որ է խօսքն ու  
գիտութիւնը։ Ենդո՛ւ ան-եպիսկոպոսական եկե-  
ղեցու հովիւները ժողովներ են անում և միջոց-  
ներ որոշում իրանց հօտի մէջ արմատացած ան-  
կրօնութիւնից սկսած մինչև յետին ոչ ծանր բա-  
րոյական ախտերը ջնջելու և իրանց հովուութեան  
յանձնած ժողովրդի ամեն բարոյական հիւան-  
դութիւնները դարմանելու համար։ Ում յայտնի  
չէ, թէ որքան ջանք և աշխատանք գործ է դը-  
նում Ուուս եկեղեցական դասը քարոզներով,  
դասախոսութիւններով, վիճարանութիւններով ա-  
ռաջն առնելու ժողովրդի մէջ տարածվող մոլար  
վարդապետութեանց, վնասակար գաղափարների  
և աղանդների տարածման։ Ուուս թերթերը, մա-  
նաւանդ կրօնականները լիքն են եկեղեցականու-  
թեան այսպիսի գործունէութեան նկարագրու-  
թեամբք։ Խակ կառավարութիւնք և ժողովրդեան  
քրիստոնէական մաքուր զգացմամբ ոգեորուած  
մասը նիւթապէս և բարոյապէս նպաստում են  
եկեղեցականութեան այդ արդիւնաւոր գործունէու-

թեան ասալարիզում, տալով դրամ, ուր սա կարևոր է, և ազգեցութիւն գործ դնելով, ուր սա անհրաժեշտ է։ Այս բարոյական պատերազմի համար ս. եկեղեցու զէնքն են խօսք և գիտութիւն, ուստի և ամեն եկեղեցեաց դիմաւոր ջանքն է կազմել գիտուն և բարոյական կրթութեամբ զարգացած եկեղեցականներ, որոնք իբրև քաջ զինուորներ կարողանան, թէ կենդանի խօսքով և թէ գրութեամբ, յաջողութեամբ մղել այս ազնիւ աստուածային պատերազմն և յաղթութիւն տալ բարւոյն չարի դէմ։ Երդեօք նոյն բարոյական անմիտար վիճակը չէ տիրում և մեր ազգին ներկայում։ Երդեօք այս վիճակին ապացոյց չէ, որ այսօր երբեմն իւր կրօնական համոզմանց և ըգգացմանց համար ամեն ինչ՝ իշխանութիւն, հարստութիւն և մինչև իսկ կեանք զրհող Հայի զաւակը կրօնափոխութեան է դիմում մի կտոր հողեւ կամ մի պատառ հայի համար, արդեօք այս վիճակին ապացոյց չէ այն, որ եկեղեցիների դրոներում կանաչ է բուսնում, ժողովրդոց շյաճախելու պատճառով, արդեօք այս անմիտար վիճակի ապարոյց չէ ժողովրդի ներկայ անտարբերութիւնը դէպի եկեղեցին և առհասարակ դէպի ամեն կրօնական արարողութիւնք. արդեօք այս վիճակը չէ, որ ամենուրեք բողոք է հանում ժողովրդի բերանից, թէ ժամանակս փչացել է, թէ հաւատ ու տէր չէ մնացել մարդոց մէջ։ Բայց ուր սոքա բացակայ են—այնտեղ թագաւորում են ամեն տեսակ բարոյական ախտեր՝ անհաւատարմութիւն, յափշտոկութիւն, զողութիւն, մարմ-

նաւոր վայելչութեանց ձգտումն—արբեցողութիւն, շռայլութիւն, զեղխութիւն և անառակութիւն— և՝ յիրաւի սոքա այսօր սովորական ախտեր են դարձած և սառնութեամբ նայումենք նոցա վերայ: Պարզ է, որ ազգի այս վիճակը տեսնելով հայաստանեայց ս. եկեղեցին չէ կարող անտարբեր մնալ և պէտք է հոգայ իւր հօտի չարեաց առաջն առնել կենդանի և գրաւոր խօսքով, կարգադրութիւններով և կանոններով:

Ո՞ւմ ձեռքով Ա. եկեղեցին պիտի կատարէ իւր այս պարտքն եթէ, ոչ իւր հմուտ և արժանաւոր սպասաւորների միջնորդութեամբ: Եհա այսպիսի սպասաւորներ պիտի պատրաստէ Ճեմարանն, և լցուցանէ ս. եկեղեցւոյ ամենամեծ պիտոյքն, որ այսօր յոյժ զգալի է: Օսմար է յոյժ այսօր հոգեոր իշխանութեան դրութիւնն, որ ի չգոյէ կարեւոր թուոյ քաջ և լաւ կազմակերպած զինուորութեան մեծ բարոյական պատերազմի դաշտում ձեռքերը ծալած պիտի կանգնի ականատես լինելով ամեն կողմից թշնամեաց յարձակմանց և յափշտակութեանց վերայ, անկարող անձսմբ յարձակողական դիրք բռնելու: Թերութիւնք ծածկելն ու բժշկել չաշխատելն անձնախարութիւն է: Միթէ կարելի է ծածկել այն հանգամանքն, որ ամենի աչքին ընկնում է. միթէ կարելի է ուրանալ, որ օր աւուր հունձք բազմանում են և մշակաց թիւը նուազում, ժողովրդի մէջ բարոյական ախտերը բազմանում են և Ա. եկեղեցւոյ արժանաւոր սպասաւորների՝ այդ ախտերի դէմ պատերազմող քաջ և լաւ զինեալ զինուորների թիւ-

ւը պակասում։ Ով չդիտէ, որ այսօր մեր հոգեսոր իշխանութիւնը տատամասութեան մէջ է, առաջնորդացուք և յաջորդացուք չկան, քարոզիչք շատ պակաս և ժողովրդին հոգեսոր հայրութիւն անելու ընդունակ քահանայք յոյժ սակաւք են. ուր են մեր խօսքի և գրչի տէր եկեղեցականք։ Երկիր կամ քաղաք, որ չունի իւր անառիկ ամրութիւնք և քաջ պաշտպանները միշտ ենթարկված է վտանգի թշնամեաց կողմից։ Հայաստանեայց Ա. եկեղեցին, որ առաջելական է, որ ամենամողովորդականն է, որ քրիստոնէութեան նախնական դարուց պարզ պատկերն է, այսօր փոխանակ եկամուտներ առնելու, իւր զաւակները տուժում է, շունենալով կարեսոր ամրութիւնքն և կարեսոր քաջ ու հմուտ զինուորները։ Էհա այս հանգամանքներն են, որ Ճեմարանի նորաւարտներից ոմանց եկեղեցական դասը մտնելը մեծ ուրախութիւն պատճառում է ամենքին առհասարակ։ Իայց բաւական է այն, ինչ որ տալիս է Ճեմարանը, բաւական է նորաւարտները լցուցանելու համար — պատասխանը պարզ է։ Ուստաց հոգեսոր դպրոցներն ու Ճեմարանները, որոնք շատ աւելի նիւթական միջոցներ ունեն և դեկավարուում են կրօնական գիտութեանց մէջ աւելի հմուտ և գիտնական ուսուցիչներով — անկարող են արտադրելու այն, ինչ որ կարեսոր է, ինչ որ պահանջուում է ժողովրդի բարոյական բոլոր պիտոյքը լցուցանելու և իրանց եկեղեցին թշնամեաց գեմ պաշտպաննելու համար. ուստի և թէ նոցա հոգեսոր իշխանութիւնն և թէ կառավարու-

լժինը մեծ գումարներ ծախելով իւրեանց հոգեռոր  
դրոցների ուսումնաւարտներից ամենընդունակներին  
ուղարկում են արտասահման, սրանց գիտութեամբ  
օտար եկեղեցեաց գիտնական պաշարներով հա-  
րստացնելու համար. աներկրայ լինելով, որ թըլ-  
նամեաց դիմադրել կարողանալու համար, հարկա-  
ւոր է նոցա ոյժն ու գէնքը ճանաչել: Այլիմէ մենք  
բացառութիւն կարող ենք կազմել, մենք, որ իրեւ  
հպատակ ժողովուրդ, աւելի կարիք ունենք պաշտ-  
պանողական միջոցների: Խայց այս ամենայն ձեռք  
է բերուում նիւթական միջոցներով. ոչ ճեմարա-  
նը առանց դրամի կարող է աւելի և աւելի ար-  
դիւնաւոր դառնալ և ոչ էլ նորա ուսումնաւարա-  
ները ձրի արտասահման գնալ և իրանց միտքը  
օտարաց գիտնական պաշարներով հարստացնել:  
Խայց սղքա անհրաժեշտ են, որ թէ մեր Ա. առա-  
քելական եկեղեցին իւր ապուուածարան և բարե-  
կրօն եկեղեցականներով իրան վայելուչ դիրքը  
բռնէ քրիստոնեայ եկեղեցեաց շարքում և թէ մեր  
ժողովուրդը արժանաւոր հօտ լինի իւր Ա. եկեղե-  
ցուն, քրիստոնէական—բարոյական կենցաղավա-  
րութեամբ: Ավ պիտի հոգայ այս անհրաժեշտ պի-  
տոյքը լցուցանելու համար կարեւոր նիւթական մի-  
ջոցներն, եթէ ոչ թէ հայ եկեղեցիք իրանց աղ-  
քատիկ գանձարանից և թէ հայ ժողովուրդն իւր  
համեմատաբար հարուստ միջոցներից: Խնդիրը կեն-  
սական է, այստեղ խնայողութիւնը հաւասար է  
բարոյական անձնասպանութեան: Յայտնի է, որ  
ճեմարանն ամբողջ 15 տարի իւր բոլոր ծանրու-  
թեամբ ծանրացած է Ա. լիմուոյս աղքատիկ

գանձարանի վերայ, ոչ վիճակներն և ոչ էլ ժողովուրդը—զեթ մատի ծայրով այդ բեռը բարձրացնելու գրեթե օգնած չեն. բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը մայր Վլթոռի տաճարը անշքութեան մէջ թողած և իւր միաբանքը, սկսած նոյն իսկ հայրապետից, աւերակաց մէջ բնակեցնելով, գուրգուրել և պահպանել է Ճեմարանը, հասկանալով նորա մեծ բարոյական նշանակութիւնը—և ահա նա այսօր իւր երախայրիքը տուեց—մի՞թէ այս հանգամանքը չպիտի բանայ մեր վիճակային եկեղեցականաց և ժողովողականաց աշքերն, որ տեսնեն և զգան, որ անհրաժեշտ է նոցա մասնակցութիւնը, սկսածը յաջողութեամբ առաջ տանելու և կատարելագործելու համար, նոյն իսկ իրանց փրկութեան և հոգևոր շինութեան համար: Կարծում ենք, որ ժամանակ է, որ թէ վիճակային հոգևոր իշխանութիւնք և թէ ժողովուրդք հասկանան և զգան, որ պարտական են, մի կողմ թողնելով եսական և մամնաւոր հաշիւները, զօրացնել իրանց առատ միջոցներով կենդրոնը—Ա. Վլթոռն. որովհետեւ կենդրոնից են տարածվում ճառագայթները դէպի ամեն կողմ: Վրեգակից են տարածվում ճառագայթներն, որոնք իրանց լուսով և ջերմութեամբ կենդանութիւն ու կեանք են պարզեւում:

Ամեն զայրած պահանջման առաջականական է պատճենը պատճենահանութիւնը: Այսուհետեւ պահանջման առաջականական է պատճենահանութիւնը: Այսուհետեւ պահանջման առաջականական է պատճենահանութիւնը: Այսուհետեւ պահանջման առաջականական է պատճենահանութիւնը: